

Հավելված N 2  
ՀՀ վարչապետի 2012 թ.  
սեպտեմբերի 29 -ի N941 - Ն  
որոշման

## Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

### ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհրդի գործունեության կարգը:

2. Խորհրդի նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշմամբ նախատեսված՝ պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից իրականացվելիք աշխատանքներում համագործակցությունն է:

#### II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

##### 3. Խորհուրդը՝

1) քննարկում է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հանրապետական գործադիր, պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող սոցիալական պաշտպանության քաղաքականությունների հիմնական ուղղությունները.

2) քննարկում է բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի բնագավառների (բացառությամբ կենսաթոշակային ապահովության բնագավառի) ռազմավարական և մարտավարական փաստաթղթերի նախագծերը.

3) համակարգում է ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների ձևավորման, ինչպես նաև տեղեկատվության արդյունավետ փոխանակման համակարգի ձևավորման աշխատանքները.

4) քննարկում է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հանրապետական (ազգային՝ հաշմանդամության հարցերով զբաղվող, երեխաների պաշտպանության, գենդերային բռնության դեմ պայքարի, կանանց հարցերով և այլն) հանձնաժողովների կատարած աշխատանքների մասին հաղորդումները.

5) քննարկում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն ապահովող իրավական ակտերի նախագծերը.

6) ըստ անհրաժեշտության՝ քննարկում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կապակցությամբ առկա խնդիրները և առաջադրում է լուծումներ.

7) քննարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի (այսուհետ՝ փորձնական ծրագիր) արդյունքները.

8) քննարկում է փորձնական ծրագրի իրականացման մասին ընթացիկ հաշվետվությունները.

9) համակարգում է միջոցառումների իրականացման տարեկան և միջնաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքները.

10) ներդաշնակեցնում է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների հիմնական ուղղությունները:

### III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև՝ արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 6-րդ կետին համապատասխան:

5. Խորհրդի նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը:

6. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է միջոցառումների իրականացման աշխատանքների ընթացքում առաջացած հարցերի ու խնդիրների լուծման համար՝ խորհրդի նախագահի, խորհրդի անդամների 1/3-ի կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի նախաձեռնությամբ:

7. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի կազմի առնվազն 2/3-ը:

8. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

9. Խորհրդի նիստի օրակարգը տրամադրվում է խորհրդի անդամներին՝ նիստից երեք օր առաջ:

10. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում հարցի քննարկումը կարող է տեղափոխվել խորհրդի հաջորդ նիստ:

11. Յուրաքանչյուր նիստն սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությամբ:

12. Խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման N 2 հավելվածի 4-րդ կետով նախատեսված աշխատանքային խմբի ղեկավարը և խորհրդի քարտուղարության ներկայացուցիչը:

13. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում գործող, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման գործընթացում ակտիվ մասնակցություն ունեցող փորձագետներ, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

#### IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Խորհրդի նախագահը՝

- 1) վարում է խորհրդի նիստերը.
- 2) ստորագրում է խորհրդի որոշումները.
- 3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստերը.
- 4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը:

#### V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

15. Խորհրդի անդամն իր պաշտոնից ազատվելու պահից կորցնում է խորհրդին անդամակցությունը:

16. Խորհրդի նիստին խորհրդի անդամի մասնակցության անհնարինության դեպքում խորհրդի նիստին մասնակցում է խորհրդի տվյալ անդամի լիազորած ներկայացուցիչը՝ խորհրդի նախագահի համաձայնությամբ:

## VI. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

17. Խորհրդի քարտուղարությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունն է:

18. Խորհրդի քարտուղարությունը՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին.

2) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

3) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը և խորհրդի նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին, համապատասխան մարմիններին և այլ կազմակերպություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ